

ՈՒՍՏՈՎԱՀ Հայն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ
ԱՊՐԻԼ, 2009
ԹԻՎ 3 (26)

ճանաչում, Դատապարտում, Կանխարգելում

Recognition, Condemnation, Prevention

Распознавание, осуждение, предотвращение

Tanıma, Kanınma, Önleme

اعتراف، ادانة ، منع

شناسایی، محاکوم کرد، جلوگیری از

Erkenning, Veroordeling, Preventie

Pengakuan, kutukan, Pencegahan

El reconocimiento, la condena, la prevención

Riconoscimento, Condanna, Prevenzione

Atzīšanu, nosodījumu, Prevention

Anerkennung, Verurteilung, Prävention

Gjenkjennelse, fordømmelse, Prevention

Uznanie, potępienie, Zapobieganie

Reconhecimento, a condenação, Prevenção

Recunoașterea, condamnare, prevenirea

Признавање, осуда, превенција

Priznanje, obsodbo, preprečevanje

Розізнавання, осуд, попередження

Tunnustamista, tuomitseminen, Prevention

La reconnaissance, condamnation, prevention

Erkännande, fördömanden, förebyggande

Recoñecemento, a condenação, Prevención

Erkännande, fördömanden, förebyggande

זיהוי, גינוי, מניעת


識別，譴責，預防


ပုဂ္ဂနိုင်ပြု, ကရတွရအနားပော်ခံကြမ်

માન્યતા, નદિ, રોકથામ

認識、非難、予防

표창, 정죄, 예방





ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հայաստանյան դիվանագիտությունը՝ թուրքական հերթական ծուղակում

Բարաբ Օբաման իր ապրիլքանչորսյան ելույթով չտարբերվեց ամերիկյան նախորդ վարչակազմերի դեկավարներից: Ամերիկահայության ու աշխարհասփյուռ հայության հոլուսերը, որ նա վերջ կդնի Հայոց ցեղասպանության խուսափողական բնութագրման քաղաքականությանը, չարդարացան: Որպես սենատոր և նախագահի թեկնածու՝ Օբաման ոչ մի կասկած չհարուցեց, որ ընտրվելու դեպքում առաջին առիթն իսկ կօգտագործի՝ ցեղասպանությունը պատշաճ ձևով ճանաչելու համար: Ապրիլի 7-ին Անկարայում չօգտագործեց այդ եզրաքառը: Հասկանալի է: Ամերիկյան արտաքին քաղաքականության օրակարգում կան ավելի առաջնային խնդիրներ՝ ահաբեկչության դեմ պայքար, լրացուցիչ ուժերի գործուղում Աֆղանստան, մերձավորարևելյան հակամարտություն, իրաք ու էներգետիկ ռեսուրսներ... ծրագրեր, որոնք առանց թուրքիայի աջակցության դժվար թե արդյունավետորեն իրականացվեն: Անկարայում թուրք պաշտոնակից Արդուլլահ Գյուլի հետ համատեղ ասուլիսում՝ Օբաման ցեղասպանությունը ճանաչելու հույս ներշնչեց մեզ՝ հստակ ասելով, որ նա իր դիրքորոշումը չի փոխել հայկական հարցում: Իր ելույթից րոպեներ անց նա տվեց երկրորդ ազդանշան՝ հարցադրման իրավունքը տալով «Զիկագո տրիբունի թղթակցին, որի հարցն էլ վերաբերում էր ԱՄՆ նախագահի՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու նախընտրական խոստանը»: Դա պատահականություն էր: Վաշինգտոնն այսօր ունի աշխարհում իմիջի վերականգնման և բազում այլ խնդիրներ, որոնք Ամերիկյան համար ավելի առաջնային են, քան հայկական հարցը: Բայցև ցեղասպանության իրավահաջորդ պետության տարածքում նման հարցի բարձրացումը չի կարելի պատահականություն համարել: Դա հստակ ազդանշան էր: ամերիկյան վարչակազմը լավ է պատկերացնում իրերի զարգացման ընթացքը: Երրորդ ազդանշանը Օբամայի ծննդավայրից էր՝ Հավայան կղզիներից: Օբաման Պոլսի Այա Սոֆիա տաճարում էր, երբ տեղեկացանք, որ Հավայը դարձավ 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը ճանաչած ԱՄՆ 42-րդ նահանգը: Քաղաքականության մեջ ոչինչ պատահական չի լինում, գուցե լինում է, բայց ես չեմ հավատում: Մենք՝ վերլուծաբաններս, սրտատրով սպասում ենք, որ Օբաման իր հայրենիքում ապրիլի 24-ին՝ պատեհ առիթին, նախագահի ամենամաս պահանջական ելույթում կօգտագործի այդ եզրույթը: Նա օգտագործեց «Մեծ եղեռն եզրաքառը, որը, ի հեճուկս բազմաթիվ վերլուծաբանների, թե «Մեծ եղեռն -ը համաշխարհային պատմագրության ու դիվանագիտության լեքսիկոնում կարող է դառնալ երկրորդ «Հոլոքոստ», միջազգային քրեական

տերմին չէ: Եթե այդպես լիներ, ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած 21 պետություններն իրենց օրենսդրական բանաձևերում իրերը չեն կոչում անուններով: Ցեղասպանությունն իրավական եզրաքար է՝ ենթակա պատմի ու փոխհատուցման, իսկ «Մեծ եղեռն -ի օգտագործումը խելացի խաղ է, որը գուցե առաջարկել էր Օբամայի հնարամիտ օգնականներից մեկը: Ի դեպ, այդ հնարամիտ խաղը լավ ձևով աշխատեց: «Մեծ եղեռն -ը անհասկանալի է օտարներին և բազմաթիվ հարցականներ է առաջացնում: Ամերիկյան քաղաքական բառամբերը բավականին հարուստ են, և այս իմաստով Օբաման չտարբերվեց Զորջ Բուշից, որը, օգտագործելով խուսափողական բոլոր եզրաքառերը, ոչ մի անգամ չարտասանեց «ցեղասպանություն բառը: Օբաման այդ քայլով հավասարապես բավարարեց թե՝ հայաստանյան և թե՝ թուրքական կողմերին, բայց ոչ սփյուռքահայությանը, որովհետև ամերիկահայությանը տված նրա խոստումներն ամենական չեն վերաբերում «Մեծ եղեռն -ի ճանաչմանը»:

Եվ ինչ... մի՞թե հայության ամենախոցելի վերքի դարմանումը, նրա կորցրած գույքն ու խլված հայրենի հողը կախված է մեկ կամ երկու նախագահի



հայտարարությունից: Դա միամտություն է և գործիք քաղաքական դիմակից: Մինչև Օբաման Ռոնալդ Ռեյգանը պաշտոնապես ճանչցած էր Հայոց ցեղասպանությունը, Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատն էլ երկու անգամ՝ 1975-ին և 1984-ին համապատասխան բանաձևեր է ընդունել այդ կապակցությամբ, սակայն այդ բոլորը ոչ մի հրավական ու օրինական հետևանքներ չեն առաջացրել ու պարտավորեցրել հանցագործ պետության իրավահաջորդին՝ Թուրքիային: Հարցն այն է, որ ցեղասպանությունների չդատապարտումը ամենալավ ենթահողն է դրանց չկանխարգելման համար. այդ առումով ամերիկացի երիտասարդ ու «խոստումնալից» նախագահը կորցրեց մարդու իրավունքների պաշտպանության հարցում ԱՄՆ-ի հեղինակագրկած կրեդոն Վերականգնելու ամենալավ շանսը, և հերթական անգամ մարդկությունը հասկացավ, որ իր իրավունքների պաշտպանության հարցում ընդունակ է առաջ գործ կազմել: Եթե Օբաման ընտրվեց նախագահ, ամբողջ թուրքական քաղաքական ընտրանին սարսափով էր մոտենում հայկական հարցին: Մանուլը հեղեղված էր բազում վերլուծություններով ու կանխատեսումներով, Թուրքիայում որոշումների ընդունման գլխավոր ինստիտուտը՝ Ազգային ազգային պատրիարքությունը և առաջարկությունը՝ Ամերիկյան վարչակազմը հօգու ցնդեցրեց այդ բոլորը: Դրանում, իհարկե, միայն Վաշինգտոնին մեղադրելը միամտություն կլինի: «8եղասպանություն եզրարարի չօգտագործմանը նպաստեց նաև մեր պետությունը՝ ապրիլի 24-ի նախօրեին այսպես կոչված «Ճանապարհային քարտեզ -ի մասին անբովանդամբ: Չեմ

ցանկանում խորասուզվել միջազգային պրակտիկայում քազմաթիվ կազմակերպությունների «ճանապարհային քարտեզների» ճակատագրի ուսումնասիրության մեջ, ընդամենը մեկ բան՝ հայկական «դիվանագիտությունը հերթական անգամ ընկավ թուրքական որոգայրի մեջ: Թուրքիան հերթական անգամ հասավ մեր ազգի ամենացավուտ խնդրի ճանաչումը մի քիչ էլ ձգձգելու ու հանաշխարհային որոշման կենտրոնների օրակարգից դուրս մղելու նպատակին: Թուրքիային հաջողվեց ապացուցել, որ Հայաստանի նորելուկ դիվանագետները զգիտեն խաղաղ քաղաքականություն: Թուրքիային հաջողվեց սփյուռքահայության ու Հայաստանի ղեկավարության մեջ հերթական սեպը խրել և սփյուռքահայությանը լարել պաշտոնական երևանի հշխանավորների դեմ: Դրա ամենաուղղակի քայլը եղավ այն, որ Հայաստանի ներքին կայունության պահպանմանը տարիներ շարունակ նպաստած Հայ Յեղափոխական Դաշնակցությունը լրեց հշխանական կոալիցիան և որպես ազգային կուսակցություն՝ ապացուցեց, որ հայության մեջ մասը դեմ է նման պայմաններով հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ: Թեև Հայաստանի նախագահը բազմից հայտարարել է, որ Թուրքիայի հետ բանակցություններում նախապայմանները «բացառված են ու որ բանակցություններից առանձնացված է ղարաբարյան հակամարտությունը, այնուամենայնիվ կասկածները չեն փարատվում: Ժամանակը ցույց կտա՝ ով էր իրավացի, և արդյոք արդարացված էր Դաշնակցության դուրս գալը կառավարող կողմանից»:

Հայկական շարունակականություն-4 Գրիգոր Գրիգորյան



Հայոց պատմությունը կերտող բանակի անզուգական մի զինվոր էլ զոհվեց Շահումյանում: Գրիգոր Գրիգորյանն իր կարծատև, բայց փորորկուն ու նվիրական կյանքի ընթացքում մարտադաշտ էր գնացել Արցախյան շարժման հենց սկզբից՝ միանալով այն հազվագյուտ տղաներին, որոնք, ազատվելով բոլշևիկյան ապազգային գաղափարախոսությունից, գնացին հայրենի Արցախ՝ իրենց նվիրական ներդրումը բերելու մեր ազատագրական պայքարին: Գրիգորը ստվորում էր Երևանի ճարտարապետա-շինարարական ինստիտուտի ավարտական կուրսում: Ծառայել է Աֆղանաստանում, որտեղ էլ վիրավորվելուց հետո զորացրվել է: 1990 թվականին անդամագրվել է Հ.Յ. Դաշնակցությանը՝ դանալով «Նիկոլ Աղբայան ուսանողական միության անդամ: Սեկնելով հայրենի Շահումյանի շրջան՝ Գրիգորն ընդգրկվեց հայդուկային խմբերի կազմում և զոհվեց գենքը ծեռքին, հայդուկապետ Շահեն Մեդրյանի կողքին՝ ապրիլի 17-ին:

Մենք մեր հողերով վճարեցինք բոլշևիկների՝ իշխանության գալու համար...

2008 թ. օգոստոս: Ամբողջ աշխարհը հետևում է Արխազիայի ու Հարավային Օսիայի խնդրի շուրջ սրված ռուս-վրացական հարաբերություններին: Եւ ահա հրապարակվում է Թուրքիայի կառավարության հայտարարությունը, որում նոտահոգություն է հայտնվում Վրաստանի վարած քաղաքականության հանդեպ: Թուրքիայի այս քայլը տարբեր վերլուծաբանների կողմից մեկնաբանվել է տարբեր կերպ: Ընդհանուր առնամբ կարելի է նշել հետևյալը.

- Թուրքիային ծերոնտու չէ Արխազիայի ու Հարավային Օսիայի հիմնահարցերի լուծումը, որովհետև դրանց առկայության պարագայում ավելի հեշտ է Վրաստանը պահել ազդեցության տակ:

- այս հայտարարությամբ Թուրքիան փաստում է իր՝ «բացարձակ չեղոր պետություն լինելը, ինչը հիմնահարցի հետագա սրման դեպքում կարող է դեր խաղալ Վրաստանի տարածքում թուրքական «խաղաղապահ ուժերի տեղակայման համար»;

- այս քայլով կարելի է նաև ճնշում տեսնել Վրաստանի նկատմամբ՝ թուրք-մեսխիթիների վերաբնակեցման հարցը շուտափությունը լուծելու համար:

- Ռուսաստանին «աջակցելու դիմաց Թուրքիան կարող է ակնկալել վերջինիս փոխադարձ աջակցությունը՝ քրդական շարժումների դեմ պայքարում:

Այսպես, թե այսպես ռուս-թուրքական հարաբերությունների ջերմացումը չի կարող չափել տարածաշրջանի, այդ թվում՝ Հայաստանում տիրող իրավիճակի վրա: Բնականաբար, այդ մերձեցումն ունեցել է իր նախատիպերը, այդ թվում՝ 20-րդ դարասկզբի թուրք-բոլշևիկյան դավադրությունը Հայաստանի դեմ, ինչի գագարնակետը հանդիսացավ 1921թ. մարտի 16-ին Ռուսաստանի ու Թուրքիայի միջև կնքված «բարեկամության և եղբայրության պայմանագրի» որով մեր հողերը հանձնվեցին Թուրքիային ու Ադրբեյջանին: Պայմանագրին չխոչընդոտեց ոչ Փետրվարյան ապստամբության շնորհիվ վերականգնված անկախությունը, ոչ էլ Զավախրում ու Ալեքսանդրապոլում թուրքերի իրականացրած ջարդերը: Մոսկվայի պայմանագրի կնքման նույն օրը Խորհրդային Ռուսաստանը համաձայնության էր եկել Անգլիայի հետ, որ վերջինս աջակցություն չցուցաբերի ապստամբ հայ ժողովորդին՝ բոլշևիկների դեմ պայքարում:

Ինչի՞ց սկսվեց թուրք-բոլշևիկյան հարաբերությունների ջերմացումը: Պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, թե իբր Խորհրդային Ռուսաստանը, տարված լինելով համաշխարհային հեղափոխության ուսուահստական գաղափարներով, քենալական Թուրքիային դիտում էր հեղափոխության դրոշակալիք՝ Արևելքում: Բայց դեռևս մինչև քենալական հեղաշրջումը՝ 1918թ. մարտի 3-ին, բոլշևիկների ու Քառյակ միության միջև կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Թուրքիային զիջվում էր նոտագորապես նույնքան տարածք, որքան հետագայում Մոսկվայի պայմանագրով: Ուղղակի մեկ տարբերությամբ, Բրեստ-Լիտովսկով Թուրքիային էր տրվում նաև Բարումը: Իսկ Մոսկվայի պայմանագրով, նպատակահարման գտնելով Բարումը պահել Վրաստանի համար, բոլշևիկները փոխարենը Թուրքիային զիջեցին հայկական Սուլումալու գավառը, որի մասին մինչ այդ խոսք անգամ չէր եղել:

Ե՛վս մեկ դավադրություն՝ Հայոց ցեղասպանության խոչորագույն դահիճներից մեկը՝ Էնքեր փաշան, 1921-ից սկսած բոլշևիկների օգտին սաղրիչ գործողություններ էր ծավալում Միջին Ասիայում՝ տեղական ժողովուրդներին հրահելով բոլշևիկների դեմ ու այդպիսով դյուրացնելով խորհրդային բանակների մուտքը Միջին Ասիա: Այդ ընդհարումների ժամանակ Ենքերը սպանվել է խորհրդային բանակի հայ սպայի ծեռքով, ով, բնականաբար, առաջնորդվել է ոչ թե բոլշևիկյան



հրամանատարության, այլ սեփական խղճի ու ազգային պատկանելության թելադրանքով: Մյուս ցեղասպանը՝ Զեմալ փաշան, 1922-ի հուլիսի 25-ին թիկնապահների հետ հանգիստ գրունում էր խորհրդային Թիֆլիսում, ընդ որում՝ Զեկայի շենքի մոտ, երբ նրան ահաբեկցին մեր Վրիժառուները:

Փաստորեն թուրք-բոլշևիկյան դավադրության արմատները շատ ավելի խորն են: Այն սկսվել է տակավին մինչև բոլշևիկների՝ Ռուսաստանում իշխանության գլուխ գալը: Բոլշևիկներն իշխանության գլուխ են եկել Գերմանիայի ֆինանսական միջոցներով ու իշխանության հասնելուց հետո վարձահատույց եղան Գերմանիային ու նրա դաշնակիցներին: Ըստ եռթյան, մենք մեր հողերով ենք վճարել բոլշևիկների՝ իշխանության գլուխ գալու համար...

Վերադառնամբ, սակայն, Արխազայի ու Հարավային Օսիայի հիմնահարցին ու այդ կապակցությամբ ռուս-թուրքական հարաբերությունների մտերմացմանը: Առաջին հյացքից սա Հայաստանի համար ոչինչ փոխել չի կարող: Բայց իրականում, հարաբերությունների նման զարգացումը կարող է հանգեցնել մեր ազգային հարցերի, այդ թվում՝ Արցախի հիմնահարցի ու ցեղասպանության ճանաչման խնդրի համար բնավ ոչ բարենպաստ որոշումների կամ համաձայնագրերի: Ուստի այլ պետությունների հետ հարաբերություններում լինենք առավելացնելով հետևողական՝ խոսափելով չկշառադատված քայլերից ու հիշելով, որ միջազգային հրադրությունն անընդհատ փոփոխվելու է, իսկ ազգային հիմնահարցերի հետապնդումը, անկախ ամեն ինչից, պետք է ամենաառաջքային ու կարևորագույն տեղը գրավի մեր արտաքին քաղաքականության մեջ:

Մարիամ Կիրակոսյան

Պատմության խեղաթյուրման թուրքական բնորդը. Արևմտյան Հայաստանը չի կարող «Արևելյան Անատոլիա» լինել

«Մարդկության վաղ շրջանի հին առասպելների գործող վայր՝, սա Հայաստանի մասին նորվեգացի նշանավոր քենախույզ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի բնորոշումն է «Խարված ժողովուրդ գրքում: Նանսենը սակայն նկատի ուներ ամբողջական պատմական Հայաստանը, որի զգակի մասն այժմ հաճարվում է «թուրքական ժառանգություն: Ի՞նչ է սա իրականում. պատմության կեղծու՞ն՝, թե՞ խեղված քանականություն: Դա թերևս ապացուցեց թուրքական վերջին ցուցահամդեսը Ամս-ում: Թուրքերը փոքր կառույցների տեսքով ներկայացրել էին «Արևելյան Անատոլիան» (Արևմտյան Հայաստանը): Վաճի պարհապները, կանա լիծր, Աղբամարի Սր. Խաչ Եկեղեցին (զմբերին էլ՝ Խաչ): Խարցին, թե ի՞նչու են Սր. Խաչի զմբերին խաչ դրել, թուրք պատմաբանները պատասխանեցին. «Այս տարածքում ապրել են շատ ժողովուրդներ, նաև հայեր: Մենք վաղուց ենք այստեղ, մենք Ուրարտուի ժառանգներն ենք, իսկ հայերը Եկվոր են: Իսկ ո՞րն է պատմական ծշմարտությունը: «Անատոլիա հին օսմաներենից թարգմանաբար նշանակում է արևելք, հետևաբար չի կարող լինել արևելյան արևելք: Անատոլիայի աշխարհագրական տարածքը չի համապատասխանում Արևմտյան Հայաստանի տարածքին. այն հանդենկում է Խեթական թագավորության տարածքին: Խեթկայիս Թուրքիայի տարածքը բազմից վարչական փոփոխությունների է ենթարկվել: Ս.թ.ա. 4-րդ հազարամյակում այստեղ Եղել է Խեթական թագավորությունը, մ.թ.ա. 10-9-րդ դր. պատմական Տրոյան, որն ավերվել է հունական արշավանքների ժամանակ, մեզ հայտնի Տրոյական պատերազմում: Մ.թ.ա. 7-6-րդ դր. հույներն անցան Փոքր Ասիա, այստեղ հիմնեցին հունական պոլիսներ: Մ.թ.ա. 5-4-րդ դր. հույն-պարսկական պատերազմներից հետո այս տարածքն ու Հայաստանն անցան Աքեմենյան Իրանին: Աքեմենյան Իրանի կործանությունից հետո Փոքր

Ասիան պատկանել է Ալեքսանդր Մակեդոնացու ստեղծած հելլենիստական պետությանը, իսկ մ.թ.ա. 2-րդ դարում դարձել հռոմեական պրովինցիա: 395թ. Հռոմեական կայսրությունը բաժանվեց Արևմտահռոմեական ու Բյուզանդական կայսրությունների: 6-րդ դարում Արևմտյան Հայաստան անցավ Բյուզանդիային:

11-րդ դարում Միջին Ասիայից Բյուզանդիա արշավեցին սելջուկ-թուրքերն ու ստեղծեցին իրենց սուլթանությունները: 1299 թ-ին Միջին Ասիայից Փոքր Ասիա արշավեց թուրքական օղուզ ցեղը Օսմանի գլխավորությամբ ու, հաղթելով տեղի սուլթանություններին, հիմնեց Օսմանյան պետությունը: Ապա թուրքերը նվաճեցին Ջուլսիսային Աֆրիկան, Արաբական ու Բալկանյան թերակղզիները: 1453 թ. վերջին արշավանքի ժամանակ թուրքական սուլթան Մեհմեդ Ֆարիհի գրավեց Կոստանդնուպոլիսը, որ Բյուզանդական կայսերական արքունիքի վերջին հանգրվանն էր, և անվանեց Խսթամբուլ (ինչ օսմաներենից թարգմանաբար՝ հաղթանակ): Բյուզանդիայի հետ Թուրքիային անցավ նաև Արևմտյան Հայաստանը:

Այս պատմական էքսկուրսը ցույց է տալիս, որ Թուրքիան չի կարող համարվել ոչ խեթական, ոչ էլ ուրարտական ժառանգորդ: Արևելյան Հայաստանը չափազանց հեռու է Արևելյան Անատոլիա կոչվելուց, այն ներ կորցրած հայրենիքն է: Թուրքերը միայն Միջին Ասիայից ներգաղթած քոչվոր ու բարբարոս ցեղեր են, որոնք իրենց վերջին հանգրվանն են գտել Փոքր Ասիայում, որ հնագույն քաղաքակրթությունների օրրան է:

Սյուզի Կարապետյան



Անձրևից չպրծած՝ ընկանք կարկտի տակ... Աղբեջանը նախապայմաններ է առաջադրում հայ-թուրքական հարաբերությունների համար

Թուրքիայի երկրիմի քաղաքականությունից զարմացած են բոլորը: Մինչ պաշտուակահարմարության, ասպարեզ է նետում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման պատրաստակամության գաղափարը, այդ երկրի ընդդիմադիր կուսակցությունները կոչ են անուն կասեցնել կարգավորման բանակցությունները: Հանրապետաժողովական ու Ազգայնական շարժում խմբակցությունները առաջարկեցին հանձնաժողովի նախագահ Մուրադ Մերջանին, որը, ի դեպ, իշխող Վրդարություն և զարգացում կուսակցությունից է, քննարկել հարցը հանձնաժողովում և դնել քվեարկության: Սուր և բուռն բանավեճից հետո առաջարկը մերժվեց:



Ընդդիմադիրները հայտարարեցին, որ Հայաստանի հետ սահմանի բացումը մեծ սխալ է, դրանով թուրքիան կկորցնի միակ հաղթաբուղթը, զգալի հարված կհասցի ազգային շահերին ու միջազգային հեղինակությանը: Նրանց հավաստմամբ՝ չի կարելի «նեղացնել Աղբեջանին՝ հանուն Հայաստանի հետ հարաբերությունների հաստատման: Անհարմար վիճակի մեջ են հայտնվել վերլուծաբանները: Նրանք զարմանում են Երևանի հետ հարաբերությունների կարգավորման հարցում թուրք բարձրաստիճան պաշտոնյաների հակասական հայտարարություններից: Անկարան բարձրածայնում է, որ Երևանի հետ հարաբերությունների կարգավորումը պետք է պայմանավորված չլինի 3-րդ երկրի հետ. փաստն ապացուցում է հակառակը: Եղբայրական Աղբեջանին չնեղացնելու հերթական կոչն էր արել Երդողանը: Նա «Դուրիիթ -ին հայտարարել էր, որ Հայաստանի ու Թուրքիայի խնդիրների լուծումը

նախևառաջ կախված է հայ-աղբեջանական հակամարտության կարգավորումից: Նույնիսկ հույս է հայտնել, որ ՄԱԿ-ը Հայաստանին կծանաչի ագրեսոր պետություն, որն իբր բռնագրավել է Աղբեջանի տարածքները: Նախագահ Գյուլն էլ «Ֆայնենշըլ թայնս -ի հետ հարցազրուցում հույս էր հայտնել, որ Երևանի հետ հարաբերությունները կարգավորվեն մինչև ընթացիկ տարվա վերջը՝ ընդգծելով 2 կողմերի փոխընդունման ու բարի կամքի առկայությունը: Քիշեցնելով, որ այս ամենին գումարվում են թուրքական 3 հայտնի նախապայմանները, վերլուծաբանները կարծիք են հայտնում, որ Անկարան պարզապես ժամանակ է շահում՝ Հայաստանի հետ շփումների ֆոնին հարաբերությունների կարգավորման իմտացիա ստեղծելով՝ ապակողմնորոշել միջազգային հանրությանը: Զավեշտալին նաև այն է, որ Բաքուն էլ իր հերթին է առաջ քաշել 3 նախապայմաններ Երևան-Անկարա հարաբերությունների կարգավորման համար՝ Հայաստանը պետք է ազատի 5 շրջանները, Լաշինի կեսը տա Աղբեջանին և ոչ պակաս հետաքրքիրը՝ Թուրքիան պետք է օգտվի Լաշինի միջանցքից: Թե ինչպե՞ս... պատմության, իսկ հինա նաև աշխարհագրական տարրական գիտելիքներից անտեղյակ մեր հարևանները առաջմն լրում են:

Աքրահամ Գասպարյան

«Ցեղասպանություն բառեզրի իրավական սահմանումը



«Ցեղասպանություն եզրույթը շրջանառության մեջ դրվեց 1944 թ-ին՝ շնորհիվ ծագումով հրեա, լեհ իրավագետ Ռաֆայել Լեմկինի: Այն օգտագործեց իր "Axis Rule in Occupied Europe" գրքում: Բառեզրը բաղկացած է հունարեն "genos" (ցեղ) բառից և "cide" (սպանել) վերջածանից: Այն հանրության ուշադրության արժանացավ, երբ ՄԱԿ-ը մարդասպանության այդ ծանրագույն հանցագործությանը տվեց հետևյալ սահմանումը. «Զանգվածային յուրաքանչյուր ոճրափորձ, որն ուղղված է ինչ-որ ազգային խմբակցության դեմ ու ներհակ է միջազգային օրենքներին, ՄԱԿ-ի ոգուն ու զգումներին և դատապարտված է բաղաքակիրք աշխարհի կողմից :

Ցեղասպանության բանաձևը ՄԱԿ-ի կողմից վավերացվեց 1948 թ. դեկտեմբերի 9-ին: Բանաձևում, որի հեղինակը Լեմկինն էր, նշված է, որ ցեղասպանությունը, անկախ այն հանգամանքից, թե իրագործվել է պատերազմի կամ խաղաղության ժամանակ, հանցագործություն է, որը խախտում է միջազգային իրավունքի չափանիշերը:

Ցեղասպանական արարք են համարվում՝

- ◉ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի ամբողջությունը կամ նաև ոչնչացնելու մտադրությամբ կատարված գործողությունները;
- ◉ զանգվածային ջարդերը;
- ◉ ցանկացած խմբի կամ համայնքի դեմ կիրառված ֆիզիկական կամ մտավոր վնասները;
- ◉ երբ խմբին հարկադրում են այնպիսի ապրելակերպ, որի նպատակն է անդամների ֆիզիկական՝ ամբողջական կամ մասնակի բնաջնջումը;
- ◉ երբ կիրավում են այնպիսի մեթոդներ, որոնք կասեցնում են տեսակի շարունակությունը;
- ◉ երբ ազգային խմբի մանուկներին տեղավորում են տարբեր ազգային խմբերում:

Ըստ 1948 թ. դեկտեմբերի 9-ի բանաձևի՝ հանցագործ են համարվում ոչ թե պետությունները, այլ առանձին անձինք՝

պետական գործիչներ, որոնք կազմակերպել և գործադրել են ցեղասպանությունը: Դարց է առաջանում. մի՞թե ցեղասպանությունը պետական քաղաքականություն չէ և չի իրականացվում պետական միջոցներով (բանակ, ժանդարմերիա և այլն):

Ինչպես կարող էին երիտթուրքերը իրականացնել Դայոց ցեղասպանությունը, առանց զորաշարժելու պետական ապարատը: Ըստ բանաձևի՝ պատասխանատու է համարվում ոչ թե պետությունը, այլ ցեղասպանությունն իրականացրած անհատները՝ պետական գործիչները: Ինչպես կարող է անհատը՝ պետական գործիչը, մեզ փոխհատուցել՝ մեր բռնազարքված հողերը վերադարձնելով, եթե այդ հողերին տիրացել է պետությունը: Նետարար ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ պետք է հանցավոր ճանաչվի և պատասխանատու լինի:

* * *

Աշխարհում ավելի քան 2 տասնյակ երկրներ ճանաչել են Դայոց ցեղասպանությունը այս թերի բանաձևի հիման վրա: Այդ իսկ պատճառով պետք է պայքարել բանաձևի բարեփոխման համար ավելացնելով մի կետ, որը նվիրված կլինի փոխհատուցմանը:

* * *

Սողոմոն Թեհլերյանը, Արամ Երկանյանը, Արշավիր Շիրակյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը, Ստեփան Ծաղիկյանը մեկընդիշտ հայի հոգուն կմնան: Նույն ուժը, վրեժը և պայքարը յուրաքանչյուրիս հոգուն են: Միայն ու'ժն է, որ ծնում է իրավունք և միայն միասնականությունն է, որ ծնում է ուժը: Եկեք միասնական լինենք: Եվ շուտով ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ և ՄԻԱՅՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ նշանաբանը իրականություն կդառնա:

**Այդ Պետրոսյան
ԳԱԱ, Արևելագիտության բաժին**

Քարաք Օբամայի ապրիլսանչորսյան ելույթը՝ առանց մեկնաբանության

«94 տարի առաջ սկսվեց 20-րդ դարի ամենամեծ ոճրագործություններից մեկը: Ամեն տարի մենք կանգ ենք առնում՝ հիշելու 1,5 միլիոն հայերին, ովքեր դաժանորեն սպանվեցին և տեղահանվեցին Օսմանյան կայսրության վերջին օրերին: Մեծ Եղեռնը պետք է ապրի մեր հիշողություններում, ինչպես այն ապրում է հայ ժողովրդի սրտում: Պատմությունը, եթե այն չի գտել իր լուծումը, կարող է ծանր բեռ լինել: 1915թ-ի սարսափելի իրադարձությունները հիշեցնում են մարդու կողմից մյուսի նկատմամբ աննարդիկային մոլոր ձեռնարկները, և անցյալի հետ հաշվի նստելը շարունակում է մնալ հաշտեցման զորեղ հիւյս: Ես հետևողականորեն արտահայտեցի իմ տեսակետը 1915թ-ի իրադարձությունների մասին, և պատմության այդ էջի վերաբերյալ իմ մոտեցումները չեն փոխվել: Իս հետաքրքրությունների շրջանակներում է փաստերի լիարժեք, ազնիվ և արդար ճանաչումը: Այդ նպատակին հասնելու համար հայ և թուրք ժողովուրդների լավագույն եղանակն անցյալի փաստերին՝ որպես առաջ շարժվելու իրենց ջանքերի մի մաս, վերաբերվելն է: Ես աջակցում եմ հայ և թուրք ժողովուրդների ջանքերին՝ անցնելու ցավալի պատմության միջով ազնիվ, բաց և կառուցողական ճանապարհով: Այդ նպատակին հասնելու համար հայերի և թուրքերի միջև, ինչպես նաև Թուրքիայի ներսում, տեղի է ունեցել խիզախ և կարևոր երկխոսություն: Ես նաև ստարում եմ Հայաստանի և Թուրքիայի ջանքերը՝ նորմալացնելու երկկողմ հարաբերությունները: Շվեյցարիայի հովանու ներքո երկու կառավարությունները համաձայնեցրել են «ճանապարհային քարտեզ հարաբերությունների նորմալացնան համար: Ես ողջունում եմ այս առաջընթացը և կոչ անում կողմերին կատարել դրա խստումը: Հայաստանն ու Թուրքիան միասին կարող են աստիճանաբար կառուցել խաղաղ, արդյունավետ և հաջողակ հարաբերություններ, միասին հայ և թուրք ժողովուրդները կլիմեն ուժեղ, եթե նրանք ընդունեն իրենց ընդհանուր պատմությունը: Ոչ ոք չի կարող հետքերել նրանց, որոնք զոհվել են Մեծ Եղեռնի ժամանակ: Անցած 94 տարիների ընթացքում հայերի կողմից կատարած ներդրումը վկայություն է հայ ժողովրդի



տաղանդի, դինամիզմի, ճկունության: Ամերիկայի Սիացյալ Նահանգները շատ ավելի հարուստ երկիր է հայկական ծագում ունեցող շատ ամերիկացիների շնորհիվ, ովքեր ներդրում են ունեցել մեր հասարակության մեջ նրանցից շատերը ներգաղթել են այս երկիր 1915թ-ից հետո: Այսօր ես նրանց և ամենուր սփոված հայերի կողքին են բարեկամության, համերաշխության և խորը հարգանքի զգացումով:

Հայոց Գողգոթա են գնում... ամբոխները խելազարված



Դեռևս վաղ մանկությունից մեր փոքրիկ սրտերում տեղ գտած Արարատի պատկերը ստիպել է մեզ առանց որևէ տրտունչի, կակաչի հետ մանկական թախիծն ու լրջությունը բռնած, արևի ու անձրևի հերթափոխի տակ քայլել դեպի Շիծեռնակաբերդ: Նույն այդ պատկերն իրենից հեռվում սփոված հայության արցունքի անսպաս աղյուր ու կարոտալից հարաչի սկիզբ է դարձել: Հետո մեր կիրակնօրյա շուկաներում խորամանկ վաճառողների վաճառասեղանների՝ Հայաստան ժամանած սփյուռքահայերին գրավող կարևոր ու թանկարժեք տարր է դարձել: Հետո էլ վերջում արդեն «հոգևոր արժեքներ վաճառե՞ն,

շահավետ տնտեսություն գնե՞մ գոչացող վաճառականների սեղանիկների տարր է դարձել: Միայն թե վերջիններս Արարատի հետ գողացել են հազարավոր մարդկանց «հույսերն ու հավատը: Գողությունից հետո էլ ինքնագոհի ժպիտով կարծել, թե թուրքի մայլում դիվանագիտություն են խաղացել: Դետո էլ... հետոն դեռ պարզ չէ, բայց սփյուռքահայության եռանդը չկոտրվի՝ համկարծ... իրենց ողջ կյանքը «Դայ դատին նվիրած անձինք ձեռքերն այս վեհ գործից դառնությամբ չլվանա՞ն համկարծ... Իսկ տագնապալից լուրերը հայտնում են, որ... Դայ դատի գրասենյակի դեկավար Կիրո Մանոյանը... «Ամերիկայի առաջնորդը, վկայակոչելով «Ճանապարհային քարտեզի առնչությամբ համաձայնագիրը Դայաստանի և Թուրքիայի միջև, օգտվել է «Դայոց ցեղասպանություն եզրարակի օգտագործումից խուսափելու հարմար պատրվակից, որպեսզի, ինչպես ինքն է հայտարարել, չխանգարի հայրութական գործընթացին: Մեր մեղքով, այդ հայտարարությունը նախագահ Օքանայի համար իր խոստումը չկատարելու պատրվակ է հանդիսացել, - նշել է Կիրո Մանոյանը: «Դայ դատ -ի դեկավարի խոսքով՝ ԱՍՍ նախկին նախագահների համեմատությամբ, Բարաք Օքանան կարողացել էր իր

հայացքները ներկայացնել ցեղասպանության մասին, սակայն պարզ է, որ նա չի արել այն, ինչ բազմից խոստացել էր: «Զկատարելով իր խոստումը՝ Բարաք Օքանան խորապես հիասթափեցրել է նախնառաջ ԱՍՍ-ի հայկական համայնքին՝ մարդկանց, որոնք քենարկել էին նրա օգտին, - նշել է Կիրո Մանոյանը...»

...Իսկ մեր փոքրիկ սրտերի հետ ժամանակի ընթացքում մեծացած Մասիսն իրենն ասում է: Անբարենպաստ պայմաններում մեծացած և թվում է, թե կիսախարիսուլ արժեքային համակարգով երիտասարդությունն էլ ապրիլի 23-ին, արհամարհելով մինչև ոսկորները թղջող տեղատարափ անձրևն ու սառեցնող քամին, հասան Շիծենակաբերդ: Զահերն ու մոմերը ձեռքներին՝ քայլեցին մինչև վերջ՝ նախորդելով ապրիլի 24-ի՝ դեպի հուշահամալիր գնացող, ժամ առ ժամ խտացող զանգվածների երթին: Քայլում ու քայլում էին մինչ ուշ գիշեր և դրանով իսկ լույսայն հայտնում «Նրանց», որ «սահմանի բացման, «հարաբերությունների կարգավորման հարցերի լուծնանը իրենք անմասն չեն մնա:

Նատալյա Շատուրյան

Հարցազրույց «Սոդուս վիվենդի հասարակագիտական հետազոտությունների կենտրոնի դեկավար, դիվանագետ Արա Պապյանի հետ



Արա Պապյան. «Հայաստանը բախտորոշ ճամափաթանի առջև է կանգնած

Արա Պապյան. Նեկայումս Դայաստանի Դանրապետությունը հայտնվել է բախտորոշ ճամափաթանի առջև: Արաջիկա ամիսները, գուցես շաբաթները, մեզ համար կարող են լինել ձեռքբերումների ժամանակաշրջան, սակայն կարող են լինել նաև մեծագույն կորուստների շրջափուլ: Դայ-թուրքական համատեղ մշուշուտ հայտարարությունը (ապրիլի 22-ին հրապարակված համատեղ հայտարարությունը-խմբը) մեր պետականության նորագույն շրջանի (1991-2009թ.) արտաքին քաղաքականության առ այսօր եղած ամենավիճահարույց փաստաթուղթն է: Խիստ խնդրահարույց է հայտարարության ստորագրման ամսաթիվը, միանգամայն անընդունելի է այն հասարակությանը ներկայացնելու ձևը և մեծապես կասկածելի են ակնկալվող օգուտները: Ավելին, գործընթացի ոչ ճիշտ զարգացման դեպքում, որը ցավոք սրտի շատ հավանական է թվում, մենք ազգովի կարող են հայտնվել պղծված անցյալի, պարապ ներկայի և անապագա հայրենիքի ուրվապատկերի առջև: Առանց չափազանցության, մենք պարզապես կարող ենք վեցնականապես դառնալ աշխարհագրական ելլուստ և քաղաքական կցորդ:

Ուսանողի Զայն. Ինչպես կը նորոշեք Դայաստանի արտաքին քաղաքականության մեջ՝ մասնավորապես հայրութական հարաբերություններում վերջերս արձանագրված փոփոխությունը:

Արա Պապյան. Այդ ճակատագրից խուսափելու միակ ուղին, ինչպես նշել եմ բազմից, Դայկական հարցի լիակատար, ամբողջական և արդարացի լուծումն է, այլ ոչ թե ինքնախարենքությամբ համեմված պատրամքը: Եթե թուրքերի կողմից

պարբերաբար և հետևողականորեն տարածվող տևեկություն-նախապայմաննեից թեկուզ և մեկը ճիշալինի, ապա դա կլինի Հայաստանի Հանրապետության որպես ինքնուրույն քաղաքական միավորի, եթե ոչ վերջը, ապա վերջի սկիզբը:

Ուսանողի Զայն. Շատերը խոսում են հայ-թուրքական սահմանի բացման մասին: Ո՞րն է սահմանի բացման անդրկուլիսային նպատակը:

Արա Պապյան. Մի կարևոր դիտողություն: Այս աղմկարույց գործընթացում խոսքը գնում է ոչ թե «հայ-թուրքական սահմանի բացման մասին», այլ Ախուրյան-Դողլուկապի երկաթուղային և Մարգարա-Նգիր ցամաքային սահմանային անցումնակետերի հնարավոր բացման մասին: Ուստի, իրերը պետք է կոչել իրենց անուններով և փաստաթուղթը հստակ պիտի խոսի միմիայն դրանց մասին և երբեք չգործածի «հայ-թուրքական սահման հասկացությունը»: Դա ճիշտ չէ միջազգային իրավունքի տեսանկյունից, դա ճիշտ չէ Հայաստանի Հանրապետության հեռագնաշահերի տեսանկյունից: Քանի որ, թեև բարձրագոչ հավակնությանը, բանակցային գործընթացի նպատակն ակնհայտորեն ոչ թե հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն է, այն է Թուրքիայի և մի շարք երկրների կողմից Հայաստանի Հանրապետության նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարումը, այլ ընդհանուն երկու մասնավոր հարցի, որ է սահմանային երկու անցումնակետի հնարավոր բացումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումն է, ուստի նման փաստաթուղթը պիտի ստորագրվի ոչ թե միջաբետական կամ միջկառավարական, այլ միջգերատեսչական մակարդակով: Հայկական կողմից անցումնակետերը գործարկելու վերաբերյալ ստորագրողները կարող են լինել, օրինակ, Տրանսպորտի և կապի փոխնախարարը, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի մաքսային հարցերի պատասխանատու տեղակալը և Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորբերի հրամանատարը:

Ուսանողի Զայն. Իսկ դա հնարավո՞ր է միջաբետական հարաբերություններում:

Արա Պապյան. Ոմանք կարող են ասել, որ այդ մակարդակով հնարավոր չէ: Յնարավոր է. Միայնալ Նախանգներ-Թուրքիա միջաբետական հարաբերությունները հաստատվել են ոչ թե միջազգային պայմանագրով, քանի որ Սենատը դեմ էր Թուրքիայի Հանրապետության հետ հարաբերությունների հաստատմանն առանց Վիլսոնի իրավարար վճռի իրականացման, այլ ԱՄՆ-ի պետքարտուղարություն-Թուրքիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն միջգերատեսչական փաստաթորով՝ 17 փետրվարի, 1927 թվակիր մողուս վիվենդիով: Նոյն ամերիկացիների օրինակով հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները կարելի է հաստատել երկիմաստություններից զուրկ, մինշանակ և զուսագ ծևակերպումներ պարունակող, միմիայն դիվանագիտական հարաբերություններ հաստատող միջգերատեսչական նոտայով:

Ուսանողի Զայն. Իսկ եթե Թուրքիան իրաժարվի այդ մակարդակով և այդ ձևով առաջ ընթանալուց...

Արա Պապյան. Դա ցույց կտա, որ թուրքերի նպատակը ոչ թե հայ-թուրքական հարաբերությունների թեկուցն մասնակի կարգավորումն է, այլ մեզ դիվանագիտական ծուղակի մեջ գցելով, առավելագույն օգուտներ քաղելն ու խորանանկորեն մեզանից իրենց ցանկալի նախապայմանների իրականացման կողղումն է: Այս երկու մանր հարցում էլ Միայնալ Նախանգները պարավոր են թիկունք կանգնել Հայաստանի Հանրապետությանը, քանի որ ՀՀ նախագահը, գոնե այս տարվա համար, ԱՄՆ-ի նախագահին պատրվակ տվեց չկատարելու իր ընտրողներին տված անսակարկ խոստումը:

Արաբ լրագրողները դատապարտում են Հայոց ցեղասպանությունը. «Ուսանողի Զայն -ը նրանց ուղեկցեց Ծիծեռնակաբերդ



Եվրամիության «Լրագրողական ցանց ծրագրի շրջանակում Մարտի 23-27-ը Հայաստան էին ժամանել լրագրողներ և խնճագիրներ Եվրոպական Հարկանանության քաղաքականության երկրներից՝ Եգիպտոս, Իսրայել, Հորդանան, Լիբանան, Սիրիա, Պաղեստին և այլք՝ լուսաբանելու հայ-ադրբեջանական և հայ-թուրքական հարաբերությունները, Ղարաբաղյան հակամարտությունն ու Հայոց ցեղասպանությունը: «Ուսանողի Զայն -ը, բաց չքողնելով մեր խնդիրներն ու տեսակետերը, օբյեկտիվորեն նրանց ներկայացնելու հնարավորությունը, հանդիպեց խմբի անդամների հետ և զրուցեց Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող հարցերի շուրջ: Խմբագրակազմին հաջողվեց արար լրագրողներին տանել Ծիծեռնակաբերդ, այցելել ցեղասպանության թանգարան-ինստիտուտ: Ահա թե ինչպես արտահայտվեցին օտարազգի լրագրողները Հայոց ցեղասպանության փաստերին ականատես

լինելուց հետո. Մունզեր Իդ, «Ալ-սաուրա օրաթերթի քաղաքական հարցերի խմբագիր, Սիրիա. «Շրջելով Յեղասպանության թանգարանում՝ միաժամանակ երկու զգացմունք ապրեցի՝ տիրություն, երբ տեսա հայ ժողովրդի նկատմանը իրականացված ցեղասպանությունը, բռնությունը, գաղթը, հայրենի հողից վտարումը, մյուսը՝ ուրախություն, որ այս ժողովուրդը կարողանում է նոր կյանք սկսել :

Ռաշա Աբդուլուահար, «Ալահրամ օրաթերթ, Եգիպտոս. «Ինձ զարմացրեց հայ ժողովրդի կամքը: Այսքան դաշնությունից հետո ինչպես է շարունակում գոյատևել, ես տպավորված եմ :

Իբրահիմ Աբու-Սուլամքա, Յորդանանի պետական հեռուստարներություն. «Յիացած եմ հայ ժողովրդի դարավոր պատմությամբ, նրա պատմական ժառանգությամբ: Թանգարանում ինձ համար շատ նոր բաներ բացահայտեցի, իսկ բուրքերի կողմից իրականացրածը հակասում է միջազգային իրավունքի բոլոր նորմերին, ուստի բոլոր երկրները և մենք պետք է դատապարտենք ցեղասպանությունն ու նեցուկ լինենք հայ ժողովրդի՝ ճանաչման արդար պահանջին :

Այցի ավարտին արար լրագրողները հյուրընկալվեցին «Ուսանողի Զայն -ի գրասենյակում և հետագա փոխգործակցության պատրաստականություն հայտնեցին:

Ցեղասպանության վերաբերյալ բացառիկ թանգարանային փաստաթղթեր



Յայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը վերջին մեկ տարվա ընթացքում համալրել է փաստաթղթերի հավաքածուն՝ նվիրատվությունների, փոխանակումների և գնումների միջոցով հանալովել է հայուրավոր բացառիկ թանգարանային արժեքներով: Յայտնաբերվել են Մեծ Եղեռնին ու հայ բնակչության բռնագաղթին առնչվող վավերագիր շուրջ հարյուր նոր լուսանկարներ: Յայտնաբերվել և թվայնացվել են շուրջ 250 բացառիկ լուսանկարների օրիգինալ ապակե կոիչներ, որոնք ներկայացնում են Սիրիայում Եղեռնից փրկված հայ տարագրյալներին հումանիտար օգնություն ցուցաբերելու դրվագներ, ի մասնավորի՝ Ազգերի Լիգայի կողմից տարագրյալներին ցուցաբերած օգնությունը լուսաբանող լուսանկարային նյութեր: 2008թ. ընթացքում թանգարանը նվիրատվության կարգով ստացել է Երեք խոշոր հավաքածուներ, որոնք ներառում են հայուրավոր եզակի նյութեր՝ արևմտահայերի կենցաղի, ընտանեկան կյանքի, կենսագործունեության վերաբերյալ, ինչպես նաև Մեծ Եղեռնին առնչվող ու դրա հետևանքները լուսաբանող վավերագրեր ու եզակի հրատարակություններ: Այս հավաքածուների շարքում առանձնահատուկ կարևորություն ունի նորվեգացի միսիոներ

Բոդիլ Բյորնի ձեռագիր հուշագրությունները և նամականին, որոնք ներկայացնում են Մուշի հայ բնակչության դեմ բուրքական բանակի կողմից իրականացված մասսայական կոտորածներն ու Սիրիայում նրա իրականացված որբախնամ գործունեությունը: Թանգարանի գրադարանը համարվել է անգլիալեզու շուրջ հարյուր արժեքավոր ու հազվագյուտ գրքերով, որոնք կարևոր սկզբնաղբյուրային արժեք են ներկայացնում Յայոց ցեղասպանության ուսումնասիրման գործում: Նախատեսվում է 2010թ. սկսել ժամանակակից թանգարանային ցուցադրության պատրաստման աշխատանքները, որի արդյունքում կստեղծվի հայեցակարգային և տեխնիկական նոր



լուծումների հիման վրա ստեղծված նոր ցուցադրություն: Այս տարվա ընթացքում ավելացվել է ՀՅԹԻ-ի www.genocide-museum.am կայքեջի բուրքերեն տարրերակը: Թանգարանի հավաքածուն մեծապես համալրվել է նաև 1919-1922թթ. ընթացքում Օսմանյան կայսրության հայ և մյուս քրիստոնյա բնակչության դեմ իրականացված բռնություններին առնչվող եզակի վավերագրերով և հրատարակություններով:

ԱՄ-ի 42-րդ նահանգը ձանաչեց Հայոց ցեղասպանությունը

Բարձր Օբամայի ծննդավայրը՝ Հավայան կղզիները, դարձավ Միացյալ Նահանգների 42-րդ նահանգը, որ ճանաչում է 20-րդ դարի արաջին ցեղասպանությունը: Նահանգի Ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձևը դատապարտում է հանցագործությունը և ընդգծում Թուրքիայի շարունակվող ժխտողականությունն այս հարցում: «Մոտ 1,5 մլն հայ տղամարդիկ, կանայք ու երեխաներ, որոնք ապրում էին Օսմանյան կայսրությունում, սպանվեցին թիրտ ցեղասպանության ընթացքում: Թուրքիան մինչև այս պահը չի ճանաչում հայերի ցեղասպանությունը: Հավայան կղզիների Ներկայացուցիչների պալատը միանում է նահանգի ամերիկահայերին ու աճռող աշխարհի հայությանը, ճանաչում և հարգում ցեղասպանության զոհերի հիշատակը և հորդորում աշխարհին՝ երբեք չնորանալ մարդկության դեմ իրագործված այդ սարսափելի հանցագործությունը, - ասված է նահանգի ներկայացուցիչների պալատի ընդունած բանաձևում: Նահանգում ապրիլի 24-ը հռչակվել է «1915-ի Հայոց ցեղասպանության ճանաչման և հիշատակի օր»: Ընդունված բանաձևի կապակցությամբ երախտիքի խոսք է հայտնել Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրենը: «Հավայ նահանգի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումն արտացոլում է Միացյալ Նահանգներում գոյություն ունեցող քաղաքա-

ցիական հասարակության այն մեծ ենթահողը և հետզինետե առող գիտակցությունը, որ արդեն եկել է հարմար պահը, որպեսզի Ամերիկան առավել հաստատակամությամբ դեմ կանգնի բոլոր ցեղասպանություններին, - ասել է Արամ Համբարյանը՝ ավելացնելով, որ Հավայի բնակչությունը, երկրի մնացած 41 նահանգների բնակչությունից ենտոք է առաջ գնան ու պահանջեն Բարար Օքամայից՝ կատարել խոստումը և ճանաչել հայոց ցեղասպանությունը:




Հարավային Ավստրալիայի երկու պալատները դատապարտեցին Մեծ Եղեռնը



Հարավային Ավստրալիայի Ստորին պալատը միացել է ավելի վաղ խորհրդարանի վերին պալատի քայլին և պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Պալատի ընդունած հռչակագրում ասվում է: «Հարավային Ավստրալիայի Ստորին պալատը միանում է ավստրալահայ համայնքին և ոգեկոչում մարդկության դեմ երբեք իրագործված ծանրագույն հանցագործություններից մեկի՝ Օսմանյան կայսրության իրականաց-

րած Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, դատապարտում է ռասայական, կրոնական ու մշակութային անհանդուրժողականության վրա հիմնված հայերի ցեղասպանությունը, և, ընդգծելով շրջանի բնակչության մարդասիրական օգնությունը Հայոց ցեղասպանությունից փրկվածներին՝ կոչ է անում երկրի կառավարությանը պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Օրինագիծ Աերկայացրել է գլխավոր դատախազ Մայքլ Արկինսոնը: Այս մշակվել է ընդդիմադիր Լիբերալ և իշխանական՝ Լեյբորիստական կուսակցությունների պատգամավորներ՝ Դեյվիդ Ռայնհարդը և Քերոնարդ Ֆինիգանի կողմից: Բանաձևն ընդունվել է միաձայն: Համահեղինակներն իրենց ելույթներում ընդգծել են Ավստրալիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությունը և նշել, որ իրենք հպարտ են Ավստրալիայում հայերի նման կազմակերպված համայնք ունենալ և այդ համատեքստում դրվագել են Հայ դատի գրասենյակի արդյունավետ աշխատանքը:



ԵՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Թուրքական խճանկար

250 հազար ստորագրություն՝ ընդեմ հայ-թուրքական սահմանի բացման

Թուրքիայի նախագահ Արդուլլահ Գյուլի ծննդավայր Կեսարիայում հավաքվել է մոտ 250 հազար ստորագրություն ընդեմ հայ-թուրքական սահմանի բացման:

Ըստ «Հյուրեկեր -ի, թուրքական ոչ կառավարական Turk Egitim-Sen կազմակերպության կողմից «Թող չքացվի Հայաստանի հետ սահմանը. Ես չեմ ուզում իմ քաղաքում տեսնել եղբարս սպանողին խորագրով արշավի ընթացքում հավաքված հարյուր հազարավոր ստորագրությունները կներկայացվեն երկրի խորհրդարան:



Սարկոզի. «Թուրքիայի տեղը Եվրամիությունում չէ»

Ֆրանսիայի քաղաքական ընտրանին վերստին դեմ արտահայտվեց Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության ծրագրին, ինչի օգտին Պրահայում հանդես էր եկել ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման: «Ես սերտորեն համագործակցում եմ նախագահ Օբամայի հետ, բայց ինչ վերաբերում է Եվրամիությանը, ապա որոշումներ պետք է ընդունեն Եվրամիության անդամ երկրները: Ես միշտ ել դեմ եմ եղել Թուրքիայի անդամակցությանը և մնում եմ իմ դիրքորոշմանը: Կարծում եմ, թե կարող եմ ասել, որ Եվրամիության երկրների ճշշող մեծամասնությունը պաշտպանում է Ֆրանսիայի այս դիրքորոշումը, -հայտարարեց Ֆրանսիայի նախագահ Սիկոլա Սարկոզին՝ ավելացնելով, որ Թուրքիան պետք է մնա ԵՄ արտոնյալ գործընկեր: Նման կոշտ հայտարարությամբ հանդես եկավ նաև Ֆրանսիայի արտգործնախարարը:



Հնչ արժեք թուրքական «վետո -ն ԱԱԾՕ-ի գագաթնաժողովում

Թուրքիան մի շարք գիշումներ է ստացել ԱԱԾՕ-ի ղեկավարի պաշտոնի համար Դանիայի վարչապետ Անդերս Ֆունդ Ռասմուսենի թեկնածությանը համաձայն նելու դիմաց: Ապրիլի 4-ին դաշինքի հոբելյանական գագաթնաժողովում նա պաշտոնապես նշանակվեց դաշինքի նոր գլխավոր քարտուղար: Ըստ թուրքական մամուլի, Անկարան իր առարկություններից հրաժարվել է ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի հետ բանակցություններից հետո: Փոխարենը նա երեք առանցքային պաշտոններ կատանա դաշինքում, ներայալ գլխավոր քարտուղարի օգնականի պաշտոնը: Դանիան նաև համաձայնել է արգելել քրոնմետ Roj-TV հեռուստաալիքի հեռարձակումը իր տարածքում: Դրանից բացի, Անդերս Ֆունդ Ռասմուսենը պետք է հաշտության ուղերձով դիմի մուսավանական աշխարհին 2005թ. դանիական մամուլում Մուհամմեդ մարգարեի ծաղրանկարների հրապարակման հետ կապված սկանդալի առնչությամբ:

Հայաստանի նախագահը կժամանի Թուրքիա բաց սահմանով

«Չատ հնարավոր է, որ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Հայաստանի և Թուրքիայի ազգային հավաքականների միջև հոկտեմբերին կայանալիք հանդիպումը դիտելու համար Թուրքիա ժամանի հենց հայրուրքական սահմանով, - հայտարարել է Հայ-թուրքական գործարար խորհրդի համանախագահ Թավան Սոյաքը:

«Սարգսյանի ամենամեծ ցանկությունն է ֆուտբոլային հանդիպումը դիտելու համար ուղղով հատել սահմանը և այնտեղից ուղղով ժամանել Թուրքիա: Նա ցանկանում է, որպեսզի դա իրականանա: Ես հավատում են, որ դա կարող է տեղի ունենալ, - հայտարարել է նա: «Այժմ գոյություն ունի «Ճանապարհային քարտեզ», որը Թուրքիայի և Հայաստանի համատեղ ջանքերի արդյունքն է: Ճանար պահի և արագործեն իրականացվելու են այդ «ճանապարհային քարտեզի կետերը: Դա շատ կարևոր է, - նշել է Հայ-թուրքական գործարար խորհրդի համանախագահը:



Քոյլոտե՛լ ազգային հավաքականների հանդիպումը

Թուրքիայի Հանրապետա-ժողովրդական ընդդիմադիր կուսակցության պատգամավոր Ըստի Թուրքությունը թուրք ժողովրդին կոչ է արել բոյկոտել Հայաստանի և Թուրքիայի ազգային հավաքականների միջև հոկտեմբերին կեսարիայում կայանալիք հանդիպումը: Նա հայտարարել է, թե Կեսարիայի Քաղիք Հաս նոր կառուցված մարզադաշտում պետք է տեղի ունենա ֆուտբոլային հանդիպում ոչ թե Թուրքիայի և Հայաստանի, այլ Թուրքիայի և Ադրբեյջանի ազգային հավաքականների միջև: «Խսկ եք ամեն դեպքում տեղի ունենա այդ հանդիպումը, ապա ժողովուրդը պետք է դատարկ թողնի մարզադաշտը, - հայտարարել է Քոյլոտե՛լ ազգային գործարար խորհրդի համանախագահը:

Եկոսիսա. «Անկարան պետք է ճանաչի Հայոց ցեղասպանությունը»

Կիպրոսի խորհրդարանի հայագի նախագահ Մարիոն Գարոյանը կոչ է արել Անկարային ընդունել իր գործած ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը, քանի որ միայն այս ոճիրի ընդունումը կիմի պատճական ծշմարտության ամբողջական և արդարացի վերականգնում: Երկրի խորհրդարանում ունեցած իր ելույթի ժամանակ Գարոյանն ասել է, որ հայերը նշում են 1915թ. ցեղասպանության տարելիցը և շարունակում են պայքարը մարդկության դեմ կատարված նախորդ դարի ամենասարսափելի ոճիրներից մեկի միջազգային ճանաչման համար: Նա կոչ է արել Թուրքիային ճանաչել և ընդունել իր հանցանքը և ներողություն խնդրել հայերից և ամբողջ մարդկությունից: Գարոյանն ասել է, որ հայերն ու կիպրոսցիները կապված են միմյանց տարիների վեր: Նրանք երկուսն էլ թուրքական դաժանության զոհն են, բայց շարունակում են կովել՝ պահանջելով ճանաչել իրենց իրավունքները և վերականգնել պատճական ծշմարտությունը:



Բարաք Օբամայի ապրիլսանչորսյան ուղերձը վշտացրել է թուրքերին

Միացյալ Նահանգների նախագահ Բարաք Օբամայի ապրիլսանչորսյան ուղերձը Թուրքիայում բացասաբար է ընդունվել ինչպես իշխանությունների կողմից, այնպես էլ ընդդիմադիր դաշտում: Արդուլլահ Գյուլը, նշելով, որ Օբամայի հայտարարության մեջ կան կողմեր, որոնց նա չի միանում, հայտարարել է. «1915թ. կյանքից գրկվել են նաև հարյուր հազարավոր թուրքեր և մահմեղականներ: Անհրաժեշտ է ցավակցել բոլոր նրանց, ովքեր կորցուել են իրենց կյանքը: Վարչապետ Ռեժիփ Թայիփ Էրդողանը, հայտարարելով, թե Օբամայի ուղերձը «հավասարակշիռ տեքստ էր, միևնույն ժամանակ նշել է, որ դա իրենց չի գոհացրել: Իսկ արտգործնախարարությունը ուղղակի «ամենունելի է համարել ուղերձում 1915-ի իրադարձությունների վերաբերյալ Սիացյալ Նահանգների նախագահի մեկնարանությունները: Քիշեցնենք, որ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, ապրիլսանչորսյան իր ուղերձում խուսափելով «Ցեղասպանություն բառեզրի կիրառմից, 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված զարդելի հանցագործությունը հայերեն բառերով որակել էր որպես «Մեծ Եղեն: Օբաման ընդգծել էր նաև, որ 1,5 մլն հայերի կոտորածը «20-րդ դարի մեծ նախճիշներից մեկն է:



Երգի երգն Անուշ է ...



Մի անգամ խիստ գրադաւած էի համակարգչի երգերը լսելով: Այդ երգերի ծայնն այնքան բարձր էր, որ ոչինչ չեղակաց: Սակայն մի ծայն լսվեց խոհանոցից: Մեղմ հնչուններ, որոնք այնքան գրավիչ էին, որ անհապաղ անջատեցի ծայնն ու շտապեցի խոհանոց:

-Տատիկ, սա ի՞նչ երգ է, որտեղից այն գիտես ...

-«Երգի երգերն են, -հոգոց հանելով արտասանեց նա, երբ թուրքը մտավ մեր գյուղեր, հայերը հենց այս երերն էին երում...»

Տատիկս լսելուց հետո ցանկացած պարզել, թե ինչ երգեր են և որտեղից են գալիս: Բանն այն է, որ այդ երգերը ծնվել են 20-րդ դարասկզբին: Նկարագրում են ցեղասպանության օրերը, այն ամենը, ինչ տեղի ունեցավ մեր ազգի հետ այդ ժամանակաշրջանում: «Դւյաման երգը գրվել է այդ ժամանակաշրջանի արհավիրք տեսած մեծն Կոմիտասի գրչով: Նա այնպես է մշակել խոսքերն ու երաժշտությունը, որ նույնիսկ այսօր լսելով՝ մարմնովդ սարսուր է անցնում, կարծես այդ անցյալի կինոժապավենը լինի: Այդ երգերը նույնպես շատ դժվար ժամանակարի են անցել մինչ կիսանեհն մեր սերնդին:

Պապիկս պատմում էր.


-Մայրս մի անգամ պատմեց ինձ այդ օրերի մասին:

Նրանք կարսում էին ապրում: Այդ օրերին բոլորը խուճապի մեջ էին: Ամեն անգամ, երբ գնում էին իրենց հարևանություն մոտ ու երեխաներին ուրիշ քաղաք տանելու, նա միշտ մեծ կտորով փաթաթած ահենի բեռներ էր դնում կաքի մեջ, այնքան որ իր և իր երեխաներին տեղ չէր մնում: Այդ ամենն անընդհատ տեսնելով «մայրս մոտեցավ նրան և հարցուեց, թե ձեզ փրկելու փոխարեն գույքը ես փրկում, ինչին այդ կինը պատասխանում էր, որ այդ բեռների մեջ գույք չէ, այլ հայալեզու գրքեր են, պիտի փրկվեն թուրքից, որ չպոցի հայերնեն:

Յպատ ու զգաստ լսեցի պապիկիս խոսքերը: Յակացա, թե լսելով «Աղանայի ողբ -ը, ի՞նչ ցավ են զգում հոգուս խորթում, այն ցավը, որ ապրել է ին ժողովուրդը ցեղասպանության օրերին, և թե ինչու «Կիլիկիան լսելուց հետո ուզում են իմ երկիր գնալ... թեև չեն տեսել Արևմտյան Յայաստանը, սակայն այդ երգերը երգելով՝ զգում եմ, որ այն սրտիս մեջ է:

Դժվար ճանապարհ են անցել «Երգի երգերը ու վստահ են, որ դեռ դժվարությունները չեն ավարտվել: Մեր ժամանակների «ռաքիս -քայաթի -ունցները օր օրի մեծ լսարան են հավաքում: Ժամանակն է սրափել, կանգ առնել և մտածել՝ արդյոք ճիշտ երգերով ենք աղտոտություն մեր ուղեղը:





Հոգեբանական թեստ Աշխարհի հեքազակաչութեան

Ստորև ներկայացված են թեմային վերաբերող 5 խումբ կարծիքներ: Ցուրաքանչյուր խմբից ընտրիր միայն մեկ պնդում, որի հետ առավել շատ եւ համաձայն:

1.
 - ա) չեմ հարգում իմ ազգին;
 - բ) նախապատվություն չեմ տալիս կոնկրետ որևէ ազգի;
 - գ) սիրում եմ իմ ազգը, բայց հարգանքով եմ վերաբերում նաև այլ ազգերի;
 - դ) համարում եմ, որ իմ ազգն ավելի օժտված ու զարգացած է, քան մյուսները;
 - ե) համարում եմ, որ ազգի իրավունքները բարձր են մարդու իրավունքներից:
2.
 - ա) հաճախ ամաչում եմ ազգիս ներկայացուցիչների համար;
 - բ) անտարբերությամբ եմ վերաբերվում ազգային պատկանելությանս;
 - գ) չեմ թաքցնում ազգությունս;
 - դ) համարում եմ, որ ազգամիջյան ամուսնությունները քանդում են ազգը;
 - ե) համարում եմ, որ ազգի շահերի պաշտպանման համար բոլոր միջոցները լավ են:
3.
 - ա) դժվարությամբ եմ հարմարվում ազգիս ներկայացուցիչների հետ;
 - բ) համարում եմ, որ առօրյա շփման համար ազգությունը նշանակություն չունի;
 - գ) նախընտրում եմ ազգիս ապրելակերպը, բայց հետաքրքրվում այլ ազգերի լեզվով ու մշակույթով;
 - դ) լարվածություն եմ զգում, երբ կողքիս օտար լեզու են լսում;
 - ե) խիստ անհրաժեշտ եմ համարում պահպանել ազգի մաքրությունը:
4.
 - ա) հաճախ ամլիարժեքություն եմ զգում ազգային պատկանելությանս համար;
5.
 - ա) զգում եմ այլազգիների գերազանցությունը;
 - բ) երբեք լուրջ չեմ վերաբերվում միջազգային պրոբլեմներին;
 - գ) համարում եմ, որ պետք է հարթել միջազգային վեճերը;
 - դ) համարում եմ, որ այլազգիների հետ փոխազդեցությունը հաճախ հղի է տիած հետևանքներով;
 - ե) համարում եմ, որ այլազգիների բնակության իրավունքները պետք է սահմանափակվեն իրենց երկրների տարածքով:



Այժմ ընտրիր քո պատասխաններում ավելի հաճախ հանդիպող տարրերակը

Տարրերակ ա: Յակված ես թերազնահատելու քո ազգը, այն համարելու ցածր այլ ազգերից: Իհարկե յուրաքանչյուր մարդ իրավունք ունի արտահայտել սեփական տեսակետը, բայց մի՞թե ննան կարծիքի պարագայում կարող են գոն լինել ինքնից, չէ՞ որ դու էլ այդ ազգի ներկայացուցիչ ես:

Տարրերակ բ: Յամարում ես, որ հասարակական հարաբերություններում կարևոր մարդկանց միջև շփումն է, իսկ ազգային պատկանելությունը երկրորդական է ու ոչ եական: Ազգային բնույթի խնդիրները քեզ քիչ են հետաքրքրում:

Տարրերակ գ: Բավականին զարգացած ազգային ինքնագիտակցություն ունես: Միևնույն ժամանակ քեզ բնորոշ են հանդիպողականությունն ու հարգանքը այլ ազգերի նկատմամբ:

Տարրերակ դ: Ազգային ինքնագիտակցությունն, իհարկե, բարձր մակարդակի վրա է քեզ մոտ: Սակայն երբեմն կարող են գերազնահատել քո ազգի արժանիքները, հակվել ամիանդուրժողականության ու սնապարժության:

Տարրերակ ե: Ազգը քո արժեքային համակարգում կարևորագույն տեղ է զբաղեցնում: Յանուն սեփական ազգի պատրաստ են ցանկացած քայլի: Ուղղակի բան այն է, որ քո ազգափրանչությունը հասնում է նոյենանդության աստիճանի:



ԽՄԲԱԳՐԱԿԱԳՄ

ԽՄԲԱԳԻՔ՝ Ա.Գասպարյան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ն.Ծատուրյան, Մ.Կիրակոսյան, Ա.Յարությունյան, Մ.Կարաթորոսյան, Ա.Լալայան, Ս.Պարսյան

ՄՐԲԱԳԻՔ՝ Ա.Յարությունյան

ԶԱՎՈՐՈՂ՝ Ռ.Ղազարյան

ք. Երևան, Հանրապետության 30, «Սիմոն Վրացյան կենտրոն

Հեռ.՝ (010) 521202, E-mail: usanoghidzayn@rambler.ru